կերպով գիւղատնտեսութիւն էին սովորեցնում, սկսեց երկրագործութեամբ պարապել: Երբ նրան հարցնում էին, թէ ինչո՞ւ ես այդպէս անում, նա սովորաբար պատասխանում էր. «ախար այդ բոլորն էլ մեր երկրին պէտք ենե... Եւ այդպէս, Կարօն շատ բան սովորեց, բայց ամէն առարկայ թերի կերպով սովորեց: Նրանայագ եռանդը միշտ ձգտում էր միանգամից կլանել բոլոր ուսմունքները: Բայց Սագօն վերջը մտաւ մի վաճառականական դպրոց եւ այնտեղ աւարտեց:

— Ջալլադի հետ մենք ծանօթացանք շատ ուշ. նա սովորում էր մի հոգեւոր դպրոցում եւ ուղարկուած էր այնտեղ Զեյթունի բողոքական միսիոնարների ձեռքով: Նա բնիկ զեյթունցի էր: Սկզբում նա խոյս էր տալիս մեզանից, յետոյ այնքան ընտելացաւ, որ սկսեց շուտ-շուտ յաճախել մեզ մօտ: Նա իր դպրոցի յառաջադէմ աշակերտներից մէկն էր եւ, դեռ չաւարտած, նրան ուղարկում էին Նիւ-Եօրքի շրջակայ գիւղերը, փորձնական քարոզներ կարդալու: Կարօն չէր սիրում նրան, իսկ մենք ամէնքս յարգում էինք: «Ի՞նչ էլ որ լինի, տէրտէրի հոտ է գալիս դրանից», միշտ այդ էր կրկնում Կարօն եւ հեռանում էր նրանից: Մստեր Ֆիշերը խորհուրդ էր տալիս նրան՝ թողնել աստուածաբանութիւնը եւ մի այլ առարկայ ընտրել, բայց նա չէր ընդունում:

— Եւ շատ լաւ էր անում, — ընդհատեցի ես Ասլանի պատմութիւնը, — հիմա նրա աստուածաբանութիւնը մեզ պէտք է գալիս, թէեւ միսիոնարների օգտին չէ ծառայում:

— Բայց նա յետոյ փոխուեցաւ, — պատասխանեց Ասլանը, — երբ վերադարձաւ իր հայրենիքը եւ տեսաւ միսիոնարների անպիտանութիւնները: Սկզբում նա, նոյն հոգոով կրթուած, մի մոլեռանդ միսիոնար էր: Այդ թողնենք, անցնենք դէպի մեր պատմութիւնը:

— Մի անգամ արտասուքը աչքերում մտաւ ինձ մօտ Կարօյի բարերարի քոյրը: Դա մի պառաւ աղջիկ էր, որ ուխտել էր ամուսնական մխիթարութիւնը փոխարինել բարեգործական մխիթարութեամբ եւ մի որբանոցի հոգաբարձուհի էր դարձել: — «նա չկայ», — բացագանչեց գունաթափ օրիորդը եւ թուլացած կերպով ընկաւ իմ բազկաթոռի մէջ. — «երէք օր է, որ տուն չի վերադարձել, ոչ մի նամակ չի թողել եւ անյայտացել է»... Օրիորդը սկսեց դառն կերպով հեկեկալ: Ինձ անհնար եղաւ մխիթարել նրան, մինչեւ ներս մտան իմ տան տիկինը եւ նրա աղջիկները: — «նրա բոլոր ծանօթների մօտ գնացի», — կրկնում էր խեղճ օրիորդը արտասուալի ձայնով, — «ոչ ոք նրա մասին ոչինչ չգիտե... ես նրան ճանաչում եմ... նա մի արկածախնդիր տղայ է... անպատճառ նրա հետ մի բան պատահած կլինի»... Ես օրիորդին թողեցի իմ սենեակում եւ իսկոյն վազեցի մստեր Ֆիշերի մօտ: Սկզբում մտածում էի, թէ